# «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ

## Ֆինանսական հաշվետվություններ
## (Աուդիտ չանցած)

## 31 դեկտեմբերի 2023թ.

## Բովանդակություն

### Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ........................................................................................1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի
մասին հաշվետվություն ..................................................................................................................................2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ......................................................3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ..........................................................................4

**«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ**
**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

| *հազ. ՀՀ դրամ* | 31 դեկտեմբեր 2023թ. | 31 դեկտեմբեր 2022թ. |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 24 949 814 | 21 578 740 |
| Ներդրումային գույք | 6 205 118 | 5 927 067 |
| Ոչ նյութական ակտիվներ | 6 343 574 | 4 285 274 |
| Կանխավճարներ ԱՕԻ պայմանագրերի գծով | 352 888 | 211 591 |
| Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր | 1 069 659 | 1 196 571 |
| Վարձակալված ակտիվների օգտագործման իրավունք | 5 556 175 | 3 507 709 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | 4 158 237 | 986 708 |
| Տրամադրված փոխառություններ | 13 761 307 | 17 249 248 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 1 866 617 | 2 700 097 |
| Հետաձգված ծախսեր | 45 171 | 30 166 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 2 005 721 | 2 018 779 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **66 314 281** | **59 691 950** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 882 002 | 608 905 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 8 333 194 | 8 203 651 |
| Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար | 269 728 | 269 728 |
| Այլ փոխհատուցվող հարկեր | 194 460 | 69 573 |
| Հետաձգված ծախսեր | 44 726 | 45 608 |
| Ժամկետային ավանդներ | 1 371 537 | 823 885 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 989 762 | 615 800 |
| Վաճառքի համար պահվող ակտիվներ | - | 60 070 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **12 085 409** | **10 697 220** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | **78 399 690** | **70 389 170** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 22 837 709 | 18 837 709 |
| Էմիսիոն եկամուտ | 4 240 000 | - |
| Չբաշխված շահույթ | 6 594 328 | 9 672 304 |
| Այլ պահուստներ | 3 425 656 | 2 825 656 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **37 097 693** | **31 335 669** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Բանկային վարկեր | 17 177 719 | 17 465 550 |
| Պարտավորություններ վարձակալության գծով | 4 514 453 | 3 166 781 |
| Ակտիվների ապագործարկման գծով պահուստ | 1 563 669 | 1 405 246 |
| Հետաձգված եկամուտ | 22 507 | 28 277 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **23 278 348** | **22 065 854** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Բանկային վարկեր | 1 819 436 | 868 767 |
| Պարտավորություններ վարձակալության գծով | 1 811 652 | 1 067 167 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 8 562 132 | 8 523 257 |
| Պարտավորությունների և վճարների պահուստ | - | 413 508 |
| Հետաձգված եկամուտ | 21 213 | 30 038 |
| Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր | 1 084 329 | 981 842 |
| Ստացված կանխավճարներ | 4 087 507 | 4 673 871 |
| Այլ հարկային պարտավորություններ | 637 380 | 429 197 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **18 023 649** | **16 987 647** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **41 301 997** | **39 053 501** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **78 399 690** | **70 389 170** |

Հայկ Եսայան
Գլխավոր տնօրեն

Կարեն Մկրտչյան
Ֆինանսական տնօրեն

Տաթևիկ Գևորգյան
Գլխավոր հաշվապահ

*«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ԲԲԸ*
*Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն*

| *հազ. ՀՀ դրամ* | 31 դեկտեմբեր 2023թ. | 31 դեկտեմբեր 2022թ. |
|---|---|---|
| Շարժական կապի ծառայությունների մատուցումից հասույթ | 16 526 364 | 16 112 680 |
| Ֆիքսված կապի ծառայությունների մատուցումից | 12 608 600 | 14 670 395 |
| Ապրանքների իրացումից հասույթ | 2 859 222 | 3 063 207 |
| Այլ հասույթ | 1 976 511 | 730 396 |
| **Ընդամենը հասույթ** | **33 970 697** | **34 576 678** |
| Ծառայությունների ինքնարժեք | (19 658 029) | (19 722 490) |
| Իրացված սարքավորումների ինքնարժեք | (2 774 162) | (2 907 845) |
| **Ընդամենը վաճառքի ինքնարժեք** | **(22 432 191)** | **(22 630 335)** |
| **Համախառն շահույթ** | **11 538 506** | **11 946 343** |
| | | |
| Ներդրումային գույքի վերաչափումից եկամուտ | 152 207 | 5 427 831 |
| Այլ գործառնական եկամուտ | 1 486 337 | 2 002 531 |
| Ընդհանուր և վարչական ծախսեր | (4 600 032) | (4 232 133) |
| Իրացման ծախսեր | (3 323 955) | (3 287 590) |
| Այլ գործառնական ծախսեր | (544 204) | (1 099 780) |
| Ակնկալվող պարտքային կորուստներ ֆին.ակտիվների գծով | 590 860 | (122 265) |
| **Գործառնական գործունեությունից շահույթ** | **5 299 719** | **10 634 937** |
| | | |
| Ֆինանսական եկամուտ | 2 070 180 | 1 855 985 |
| Ֆինանսական ծախսեր | (2 475 663) | (1 540 089) |
| Զուտ փոխարժեքային տարբերություններից օգուտ՝ հանած վնաս | (186 724) | (460 410) |
| **Շահույթ մինչև հարկումը** | **4 707 512** | **10 490 423** |
| | | |
| Շահութահարկի գծով ծախս | (848 706) | (1 813 122) |
| **ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ** | **3 858 806** | **8 677 301** |
| | | |
| **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ** | **3 858 806** | **8 677 301** |

| *հազ. ՀՀ դրամ* | Կանոնադրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Չբաշխված շահույթ | Այլ պահուստներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 1-ը հունվարի 2022թ.** | **18 837 709** | **0** | **2 195 699** | **2 825 656** | **23 859 064** |
| 2022թ.զուտ շահույթ | - | | 8 677 301 | - | **8 677 301** |
| 2022թ. ընթացքում մայր ընկերության դեբիտորական պարտքի՝ իրական արժեքով ճանաչման ազդեցությունը | - | | (889 764) | - | **(889 764)** |
| 2022թ. ընթացքում մայր ընկերությանը տրված փոխառությունների իրական արժեքով ճանաչման ազդեցությունը | - | | (2 121 269) | - | **(2 121 269)** |
| Ֆինանսական երաշխիքի ապաճանաչում | - | | 1 546 770 | - | **1 546 770** |
| Սեփական կապիտալում արտացոլված գործարքների գծով հետաձգված հարկի ազդեցությունը | - | | 263 567 | - | **263 567** |
| **Մնացորդը առ 31-ը դեկտեմբերի 2022թ.** | **18 837 709** | **0** | **9 672 305** | **2 825 656** | **31 335 670** |
| **Մնացորդը առ 1-ը հունվարի 2023թ.** | **18 837 709** | **0** | **9 672 305** | **2 825 656** | **31 335 670** |
| 2023թ.զուտ շահույթ | - | | 3 858 806 | - | **3 858 806** |
| 2023թ. ընթացքում մայր ընկերության դեբիտորական պարտքի՝ իրական արժեքով | - | | (84 593) | - | **(84 593)** |
| Սեփական կապիտալում արտացոլված գործարքների գծով հետաձգված հարկի ազդեցությունը | - | | 15 227 | - | **15 227** |
| Սովորական բաժնետոմսերի թողարկում | 4 000 000 | 4 240 000 | (267 417) | - | **7 972 583** |
| Հայտարարված շահաբաժիններ | - | | (6 000 000) | - | **(6 000 000)** |
| Պահուստային կապիտալի ճանաչում | - | - | (600 000) | 600 000 | |
| **Մնացորդը առ 31-ը դեկտեմբերի 2023թ.** | **22 837 709** | **4 240 000** | **6 594 328** | **3 425 656** | **37 097 693** |

| *հազ. ՀՀ դրամ* | 31 դեկտեմբեր 2023թ. | 31 դեկտեմբեր 2022թ. |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հաճախորդներից ստացված վճարումներ | 35 026 236 | 34 286 800 |
| Ստացված տոկոսներ | 118 898 | 44 125 |
| Կանխավճարներ ԱՕԻ պայմանագրերի գծով | (2 215 152) | (1 472 218) |
| Դրամական միջոցներ վարձակալությունից | 1 813 478 | 896 726 |
| Դրամական միջոցներ այլ գործառնական գործունեությունից | 458 301 | 940 651 |
| Ծառայությունների մատուցման գծով վճարումներ | (12 240 275) | (10 831 434) |
| Վճարումներ աշխատակիցներին | (7 313 296) | (7 405 889) |
| Վճարված շահութահարկ | - | (21 653) |
| Վճարումներ բյուջե, բացի շահութահարկը | (4 386 416) | (4 501 253) |
| Պաշարների մատակարարներին վճարումներ | (2 950 048) | (3 694 049) |
| Գործուղումների համար կատարվող վճարներ | (32 844) | (52 447) |
| Այլ գործունեությամբ օգտագործված դրամական միջոցներ | (175 819) | (7 790) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | **8 103 063** | **8 181 569** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (15 519 563) | (10 225 279) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | 1 612 291 | 1 874 723 |
| Տրամադրված փոխառության մարում | 6 000 000 | 297 697 |
| Մայր կազմակերպությանը տրամադրված փոխառություններ | - | (10 357 819) |
| Բանկային ավանդների վերադարձ | 1 617 000 | - |
| Բանկային ավանդների տրամադրում | (2 159 459) | (822 000) |
| **Զուտ դրամական միջոցներ ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեությամբ օգտագործված)** | **(8 449 731)** | **(19 232 678)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | |
| Ստացված վարկեր | 1 580 280 | 20 524 762 |
| Վարկերի մարում | (1 579 400) | (8 786 288) |
| Մայր կազմակերպությանը վճարված շահաբաժիններ | (6 000 000) | - |
| Սովորական բաժնետոմսերի թողարկումից մուտքեր | 8 240 000 | - |
| Վարձակալության վճարներ | (1 523 676) | (1 387 683) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | **717 204** | **10 350 791** |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 3 426 | (150 942) |
| **Զուտ դրամական միջոցների և դրան համարժեքների հոսքեր** | **373 962** | **(851 260)** |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին** | **615 800** | **1 467 060** |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին** | **989 762** | **615 800** |

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 24/1, 0014 Հեռ.՝ 010 41 04 10
"Telecom Armenia" OJSC, 24/1, Azatutyan ave., Yerevan 0014, RA Tel.: 010 41 04 10



# ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

## Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

2024 թվականին Ընկերությունը շարունակելու է զգալի ներդրումներ կատարել ռազմավարական տեսանկյունից կարևորագույն ուղղությունների զարգացման մեջ: Ընկերության ռազմավարության առանցքային հենասյուներից մեկը կոմունիկացիոն ցանցերի մշտական արդիականացումն է, ինչպես նաև նորարարական և ժամանակակից լուծումների ներդնումը, որն իր հերթին կբերի ոլորտի շարունակական զարգացմանը:
Ցանցերի արդիականացումը ենթադրում է ցանցային, սերվերային և ծրագրային հզոր և ճկուն ենթակառուցվածքի ստեղծում, որը ներառում է 25G-PON նորագույն տեխնոլոգիայի հիման վրա FTTH ցանցի հասանելիության ընդլայնում հանրապետության ողջ տարածքում, շարժական ցանցի ծածկույթի ընդլայնում և գործող շարժական ցանցի որակի բարելավում:
Ճկուն ենթակառուցվածքի առանցքային նախապայմաններից է բիլինգային համակարգի արդիականացումը, ինչը թույլ կտա բաժանորդներին առաջարկել միասնական համակարգ. մեկ հարթակում բազմաթիվ ծառայություններից, ինչպես նաև նոր փաթեթային առաջարկներից օգտվելու հնարավորություն: Նախագծի մեկնարկը տրվել է 2023 թվականի երկրորդ կիսամյակում և նախատեսվում է ավարտել 2024 թվականին:
Ամրակցված և շարժական կապի ծառայությունների որակի և հասանելիության աճին զուգահեռ Ընկերությունը նախատեսում է մեծացնել բաժանորդների քանակը նաև կոնվերգենտ փաթեթների/ծառայությունների գրավիչ առաջարկներով, որտեղ շարժական ծառայությունները կապակցված են ամրակցված լայնաշերտ ինտերնետի, IPTV-ի և ֆիքսված ձայնային ծառայություններին:
Ընկերությունը կարևորում է հաճախորդների լավագույն փորձառությունը շփման բոլոր կետերում՝ իր հաճախորդ համարելով նաև Team հավելվածների և ծառայությունների բոլոր օգտատերերին, որոնց քանակի ավելացումը նույնպես Ընկերության առաջիկա տարվա առաջնահերթություններից է:
Ընկերությունը իրականացնում է հաճախորդների առաջխաղացման ինդեքսի Net Promoter Score (NPS) մշտական մոնիտորինգ՝ հաճախորդների գոհունակության բարձրացմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը գնահատելու նպատակով:
Ընկերության հետագա զարգացման առանցքային ուղղություններից է նաև ճկուն և բարձրակարգ միջազգային կապուղիների ենթակառուցվածքի ստեղծումը, որը կամրապնդի ՀՀ դերը որպես տարանցիկ շրջան Ասիայից Եվրոպա տվյալների փոխանցման համար:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 24/1, 0014 Հեռ.՝ 010 41 04 10
"Telecom Armenia" OJSC, 24/1, Azatutyan ave., Yerevan 0014, RA Tel.: 010 41 04 10

## ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունն արդեն իսկ ունի գործուն DWDM օպտիկամանրաթելային ցանց, որի միջոցով ապահովվում է կապը դեպի Վրաստան և Եվրոպա: DWDM ցանցի արդիականացումները էլ ավելի կբարձրացնեն տվյալների տարանցման թողունակությունը:
Ընկերությունը մեծ կարևորություն է տալիս արդյունավետ կառավարման և ոլորտի լավագույն չափանիշների պահպանմանն ուղղված միջազգային ստանդարտների ներդրմանը: Համաձայն ստանձնած պարտավորությունների՝ Ընկերությունը 2023 թվականին արդեն իսկ ստացել է ISO 27001 տեղեկատվական անվտանգության հավաստագիր, իսկ հաջորդիվ նախատեսվում է ISO 9001:2015 որակի միջազգային ստանդարտի հավաստագրումը:

Ընկերության առաքելությունն է մարդկանց շփումն ու աշխատանքը դարձնել ավելի հասանելի ու հարմար՝ ներդնելով նորագույն թվային տեխնոլոգիաները: Առաջիկա տարիների բոլոր նախաձեռնություններն ու ծրագրերն միտված են այս առաքելության իրականացմանը:

team TM
TELECOM ARMENIA
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 24/1, 0014 Հեռ.՝ 010 41 04 10
"Telecom Armenia" OJSC, 24/1, Azatutyan ave., Yerevan 0014, RA Tel.: 010 41 04 10

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**«Տելեկոմ Արմենիա» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**
**ՀՀ, ք. Երևան 0014, Ազատության պող"24/1,**
**Հեռ.՝ (+37410) 410410**
**էլ. փոստ՝ info@telecomarmenia.am**

**Հաշվետվություն թիվ 1, 22.03.2024**

Ստորև ներկայացվում են դատական գործերի վերաբերյալ էական փոփոխությունները 21.03.2024թ. դրությամբ.

1. Թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.05.2023թ. վճռի դեմ վարչական գործով պատասխանող՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, երրորդ անձինք՝ «ԹԻՄ» ՓԲԸ, Հայկ Հովիկի Եսայանը, Ալեքսանդր Հովիկի Եսայանը ներկայացրել են վերաքննիչ բողոքներ:

   ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը 29.01.2024 թվականի որոշմամբ վարչական գործով պատասխանող ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, ինչպես նաև երրորդ անձինք «Թիմ» փակ բաժնետիրական ընկերության, Հայկ Հովիկի Եսայանի, Ալեքսանդր Հովիկի Եսայանի ներկայացրած վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն՝ թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.05.2023թ. կայացված վճիռը՝ Հայկ Եսայանի և Ալեքսանդր Եսայանի կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված գործողությունները որպես չբացահայտված տեղեկատվության օգտագործմամբ և ֆիդուցիար պարտավորությունների խախտման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն որակելուն պատասխանողին պարտավորեցնելու մասին հայցը բավարարելու և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու մասով, բեկանել է:
   ՀՀ վարչական դատարանի 11.05.2023թ. թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով կայացրած վճիռը՝ «Թիմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված գործողությունները որպես չբացահայտված տեղեկատվության օգտագործմամբ և ֆիդուցիար պարտավորությունների խախտման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն որակելուն պատասխանողին պարտավորեցնելու մասին հայցը բավարարելու և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու բողոքարկված ու չբեկանված մնացած մասով, թողել է անփոփոխ:
   Նույն վարչական գործով պատասխանող՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, երրորդ անձինք՝ «ԹԻՄ» ՓԲԸ, Հայկ Հովիկի Եսայանը, Ալեքսանդր Հովիկի Եսայանը 29.02.2024թ. ներկայացրել են վճռաբեկ բողոքներ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.01.2024թ. որոշման անբարենպաստ մասի դեմ:

2. Թիվ ՎԴ/6727/05/20 վարչական գործով հայցվոր «Յուքոմ» ՓԲԸ կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2023թ. որոշմամբ ամբողջությամբ մերժվել է:

   ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2023թ. որոշման դեմ «Յուքոմ» ՓԲԸ 20.01.2024թ. ներկայացրել է վճռաբեկ բողոք:
   ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատը 21.02.2024թ. որոշմամբ «Յուքոմ» ՓԲԸ վճռաբեկ բողոքը վերադարձել է:
   «Յուքոմ» ՓԲԸ 11.03.2024թ. կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 24/1, 0014 Հեռ.՝ 010 41 04 10
"Telecom Armenia" OJSC, 24/1, Azatutyan ave., Yerevan 0014, RA Tel.: 010 41 04 10

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իմ լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
Հայկ Եսայան
Գլխավոր տնօրեն

Մարտ 22, 2024

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA YEREVAN OPEN JOINT-STOCK COMPANY «TELECOM ARMENIA» 02500052